# Արձանագրություն N 3

<< **ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-20-ՋՐԱՅԻՆ/2023** >> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան

**03. 05. 2023թ.**

ՀՀ ոստիկանության կարիքների համար **տեխնիկական միջոցների** ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-20-ՋՐԱՅԻՆ/2023** ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝

**1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ.**

Մասնակիցներից՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ -ի փաստաթղթերը կազմված չէր հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատող հանձնաժողովի 28.04.2023 թվականի № 2 որոշմամբ մասնակիցներին տրվել էր 1 աշխատանքային օր անհամապատասխանությունը շտկելու համար:

«Էյչ Գրուպ» ՍՊԸ -ն ժամանակին պատշաճ կերպով կատարել է շտկումը և գնահատող հանձնաժողովը «Էյչ Գրուպ» ՍՊԸ -ի հայտը գնահատեց բավարար:

«ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ -ն չի կատարել անհամապատասխանությունների շտկումները, մասնավորապես՝ հավելված 1-ը սխալ է լրացրած և բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը,բացակայում է հավելված 1.3-ը և 3-րդ չափաբաժնի առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը լրացված չէ: Գնահատող հանձնաժողովը «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ -ի հայտը գնահատեց անբավարար և որոշեց մերժել ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի № 526-ն որոշման 42-րդ կետի համաձայն, ինչպես նաև ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը կձեռնարկվի «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ -ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

**2.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝**

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-20-ՁՐԱՅԻՆ/2023 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել՝ 1-ին և 2–րդ չափաբաժիններով՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ–ին, 4–րդ չափաբաժնով ՝ «Մուրան» ՍՊԸ–ին, իսկ 3–րդ չափաբաժինը համարել չկայացած:

Համաձայն “Գնումների մասին” ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 10-րդ օրացուցային օրը:

“Գնումների մասին” ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում «Էյչ Գրուպ» ՍՊԸ–ի և «Մուրան» ՍՊԸ–ի հետ կկնքվի ծառքբերման գնման պայմանագրեր:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3 դեմ 0 :

**ՆԱԽԱԳԱՀ՝**

ոստիկանության փոխգնդապետ Դ. Հակոբյան

**ՀԱՅՏԸ ԳՆԱՀԱՏՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Ա. Ավագյան

ոստիկանության մայոր Ա. Սարգսյան

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

ոստիկանության կապիտան Ա. Աբասյան